

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Գ. ՎԱՐՂԱՆՅԱՆ

Կրկնությունը՝ որպես բառակազմական եղանակ, գործել է հայերենի զարգացման տարբեր փուլերում՝ սկսած նախագրային ժամանակներից մինչև արդի շրջանը, և հատուկ է եղել թե՛ գրական տարբերակներին և թե՛ մանավանդ բարբառների: Ժամանակակից գրական արևելահայերենում այն նույնպես բավական լայն կիրառություն ունի մասամբ գրական հայերենի բնականոն զարգացման, մասամբ էլ խոսակցական տարբերակների ուժեղ ազդեցության շնորհիվ:

Հիմքերի կրկնությամբ կազմված բաղադրությունները հատուկ են ինչպես վերլուծական, այնպես էլ համադրական բառակազմությանը, բայց ավելի տարածված և բազմազան են հատկապես վերլուծականների մեջ: Նկատելի է և մի յուրահատկություն. համադրական կառուցվածքի կրկնավորները առավելապես բնորոշ են բայակազմությանը, իսկ վերլուծականների մեջ գերակշռում են անվանական, ավելի ճիշտ՝ ոչ բայական կազմությունները: Դրանով էլ մեծ չափով պայմանավորված է նաև նախադասության մեջ վերլուծական կրկնավորների կատարած հիմնական դերը՝ որոշչային և պարագայական կապակցություններում հանդես գալը:

Կրկնավոր բաղադրությունները ունեն նաև ընդգծված ոճական արժեք և պատկերավորման արդյունավետ միջոց են ծառայում հատկապես բանաստեղծական լեզվում՝ գլխավորապես մակդիրներ, համեմատություններ և փոխաբերություններ կերտելիս:

Ժամանակակից հայերենի տեսությանը և բառակազմությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատություններում¹ համադրական և վերլուծական տիպերի տարբեր եղանակներով կերտված բառերը, այդ թվում՝ կրկնավոր բաղադրությունները, անհրաժեշտ ուշադրության են արժանացել և իրենց հիմնական գծերով ներկայացվել: Սակայն անվանական վերլուծական կազմությունները ամբողջությամբ վերցրած առանձին քննության նյութ չեն դարձել՝ ի տարբերություն բայականների, որոնց հատուկ մենագրություն է նվիրված: Բացի այդ, լեզվի զարգացման ընթացքը և որոշ նոր մեկնաբանությունների անհրաժեշտությունը պահանջ են առաջադրում անդրադառնալ հայերենի բառակազմական այդ առանձնահատուկ եղանակի ավելի համակողմանի քննությանը:

Սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել ժամանակակից հայերենի անվանական (ոչ բայական) կրկնավոր վերլուծական բաղադրությունները և դասակարգել դրանք նախ՝ ըստ կրկնվող բաղադրիչների կամ եզրերի կապակցման միջոցի, այնուհետև՝ ըստ

¹ Տե՛ս Մ. Արևելյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, Ս. Գ. Արքախանյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969, նույնի՝ Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, Էդ. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, Վ. Դ. Առաքելյան, Ա. Ա. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, Ա. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բառակազմություն, Եր., 1952, նույնի՝ Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, Գ. Բ. Զահրուկյան, Էդ. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, Եր., 1980, Գ. Բ. Զահրուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990 և այլն:

² Տե՛ս Ա. Ս. Մարգարյան, Հայերենի հարադիր քայտը, Եր., 1966:

բաղադրիչների խոսքի մասային պատկանելության, հնչյունական և քերականական ձևավորման, ինչպես նաև (հնարավորության դեպքում)՝ ըստ բաղադրիչների միջև առկա շարահյուսական հարաբերությունների, մասամբ նաև խոսքի մեջ նրանց կատարած դերի:

Նշենք նաև, որ տվյալ բաղադրությունները անվանական (ոչ բայական) ենք կոչում էլճելով բառակազմությանը ստացված միավորներից և ոչ թե սկզբնական բաղադրիչների խոսքի մասային պատկանելությունից, քանի որ բաղադրիչների դերում սակավ դեպքերում կարող են հանդես գալ և բայարմատներ կամ բայի հարացուցային ձևեր:

Բաղադրիչների կապակցման միջոցից էլճելով՝ առանձնացվում են վերլուծական կրկնավորների հարակցական, շաղկապական և նախդրական տեսակները: Տերմինները կիրառվում են ըստ է. Աղայանի¹, այն տարբերությամբ, որ նա վերջին տեսակն անվանում է նախադրական, որ արտաքուստ կապված է թվում նախադրություն և ոչ նախդիր տերմինի հետ: Փոքր-ինչ այլ կերպ է դասակարգում կրկնավոր հարադրությունները Ա. Մարգարյանը², որն առանձնացնում է ա) անհնչյունափոխ, բ) հնչյունափոխված, գ) նախդրավոր տեսակներ: Այս դասակարգումը լիակատար չէ, քանի որ դուրս են մնում շաղկապական կրկնավորները, բացի այդ՝ նախդրականների մեջ էլ կարող են լինել թե՛ անհնչյունափոխ, թե՛ հնչյունափոխված տեսակներ:

Հարակցական կրկնավորներ

Այս տեսակի մեջ վերը նշված հատկանիշների (բաղադրիչների ձևավորման առանձնահատկությունների) հիման վրա առանձնացվում են կրկնավորների հետևյալ ենթատեսակները:

1. *Կրկնավորներ -մաքուր*³ (անփոփոխ) բաղադրիչներով

Այս կազմությունները ամենատարածվածն են և փաստորեն բաց խումբ են կազմում, սահման՝ այս կաղապարով կարելի է կազմել բազմաթիվ նորանոր բառեր առանց որևէ սահմանափակության: Ինչ վերաբերում է բաղադրիչների խոսքի մասային պատկանելությանը, ապա կարելի է նշել, որ որպես կրկնվող բաղադրիչներ առավելապես հանդես են գալիս գոյականները, ավելի քիչ՝ ածականները, թվականները և ապա՝ այլ խոսքի մասեր: Սրա հիմնական պատճառը թերևս այն է, որ գոյականները մյուս խոսքի մասերի նկատմամբ ավելի մեծ թիվ են կազմում (թեև այս բնույթի վիճակագրական հաշվումներ հայոց լեզվի համար չեն կատարված): Հատկապես փոքրաթիվ, բայց հետաքրքրական խումբ են կազմում այն բայարմատները, որոնք անկախ հանդես չեն գալիս: Որոշ դեպքերում, երբ արմատներն առանձին գործածական չեն, դժվար է որոշել նրանց խոսքի մասային պատկանելությունը (օր.՝ վետ-վետ): Քննարկենք անփոփոխ բաղադրիչներով կրկնավոր կազմությունների օրինակներ՝ խմբավորված ըստ բաղադրիչների խոսքի մասային պատկանելության.

ա) գոյականներով՝ *ալիք-ալիք, երամ-երամ, թել-թել, թուր-թուր, ծուփ-ծուփ, կուց-կուց, հատ-հատ, հեղեղ-հեղեղ, ճակատ-ճակատ, շարան-շարան, շեղք-շեղք, պալան-պալան* և այլն.

բ) ածականներով՝ *սվվան-սվվան, բյուր-բյուր, թուխ-թուխ, վառ-վառ, վարար-վարար, տարբեր-տարբեր* և այլն.

գ) թվականներով՝ *մի-մի, մեկ-մեկ, երկու-երկու, երեք-երեք, չորս-չորս, յոթ-յոթ, հարյուր-հարյուր, հազար-հազար* և այլն.

դ) դերանուններով՝ *ամեն-ամեն, այս-այս, այսինչ-այսինչ, այսքան-այսքան, բոլոր-բոլոր, ինչ-ինչ, ով-ով, ուրիշ-ուրիշ, քանի-քանի, ուր-ուր* և այլն.

ե) մակբայներով՝ *արագ-արագ, ետ-ետ, երբեմն-երբեմն, շատ-շատ, ստեպ-ստեպ, վեր-վեր, ուշ-ուշ, քիչ-քիչ* և այլն.

զ) բայարմատներով՝ *գոչ-գոչ, թիռ-թիռ, հև-հև, վազ-վազ* և այլն.

է) կապերով՝ *մեք-մեք, վրա-վրա, մոտ-մոտ.*

¹ Տե՛ս էդ. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 231:
² Ալ. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 55:
³ «Մաքուր» և «ձևավոր» բաղադրիչներ անվանումները կիրառված են Գ. Զահուկյանի «Մաքուր» և «ձևավոր» հիմքեր հասկացությունների համաբանությամբ, տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 160:

ը) ձայնարկություններով ու բնածայնություններով՝ *թըխկ-թըխկ, ծիվ-ծիվ, հայ-հայ, հաֆ-հաֆ, ջու-ջու, ըշա-ըշա* և այլն:

Ինչպես երևում է օրինակներից, այս եղանակով կրկնավորներ են կազմվում գրեթե բոլոր խոսքի մասերից՝ բացառյալ վերաբերականներն ու շաղկապները: Սակավաթիվ են նաև կապերով կազմված կրկնավորների օրինակները, ընդ որում՝ այստեղ բաղադրիչները կարող են ունենալ նաև գոյականական կամ ածականական արժեք, մանավանդ, երբ կրկնավորները հանդես են գալիս բայական հարադրությունների կազմում՝ *մեջ-մեջ մոտ-մոտ անել* և այլն:

Ինչ վերաբերում է բաղադրիչների կրկնության արդյունքին, պետք է նշել, որ վերլուծական բառակազմության մեջ այս եղանակով կազմվում են հիմնականում հատկանիշ ցույց տվող բառեր՝ ածականներ և մակբայներ՝ անկախ բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունից: Ձայնարկություններով կազմված կրկնավորները, կախված խոսքի մեջ ունեցած դիրքից, կարող են պահպանել իրենց բաղադրիչների խոսքիմասային արժեքը և չլինել նախադասության անդամ (*հայ-հայ՛, մոտիկ տեղից եկա*), իսկ այլ դեպքերում դարձյալ հանդես գալ որպես ածական կամ մակբայ (*ծիվ-ծիվ հավք, թըրխկ-թըրխկ մոտեցավ* և այլն): Գեղարվեստական գրականության մեջ վկայված են բազմաթիվ օրինակներ կրկնավորների ածականական և մակբայական կիրառությամբ, բայց մակբայական կիրառությունները զգալիորեն գերակշռում են, քանի որ կրկնությունը, ինչպես հայտնի է, այդ խոսքի մասի կերտման ամենագործունեղանակներից մեկն է: Տեղի խնայողության նպատակով օրինակները բերում ենք ոչ թե նախադասություններով, այլ բառակապակցություններով, քանի որ այստեղ ևս դրսևորվում է շարահյուսական կապակցության բնույթը: Այսպես, ածականական կիրառությամբ՝ *թուր-թուր ունք, ծուփ-ծուփ հյուներ, ծուփ-ծուփ ծաղկունք, հատ-հատ արցունք, հեղեղ-հեղեղ հորդա, ուրիշ-ուրիշ ազգեր* և այլն. մակբայական կիրառությամբ՝ *գոչ-գոչ գնալ, երամ-երամ եկան, թել-թել մանել, թիռ-թիռ ճախրել, ծուփ-ծուփ թափվել, հե-հե վազ տալ, ճակատ-ճակատ կանգնել, մեկ-մեկ ուտել, շարամ-շարամ իջնել, շիթ-շիթ ծորալ, պալամ-պալամ ելնել, վառ-վառ հուրհրալ, վարար-վարար հորդել, վետ-վետ գալ* և այլն:

II. *Կրկնավորներ «ձևավոր»՝ փոփոխված բաղադրիչներով*

Այս խմբի մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական տարատեսակություն՝ կախված բաղադրիչների փոփոխության բնույթից: Փոփոխությունները կարող են կապված լինել բաղադրիչների կամ զուտ հնչյունական, կամ քերականական ձևավորման հետ: Այդ երկու ձևավորումներն էլ իրենց հերթին ունեն տարբեր դրսևորումներ: Ստորև բերվող նյութը ներկայացվում է հետևյալ խմբավորումներով.

Ա. *Բաղադրիչների հնչյունական ձևավորում*

1. *Առաջին բաղադրիչն անփոփոխ, երկրորդը հնչյունական փոփոխության ենթարկված:*

Այստեղ հնարավոր են հետևյալ տարատեսակները.

ա) Երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայն հնչյունը փոխարինվում է որևէ այլ բաղաձայնով. 1. *մ-ով՝ բան-ման, բարակ-մարակ, թելիկ-մեղիկ, խոլոր-մոլոր, խունջիկ-մունջիկ, ծոփ-մոփ, ծուռտիկ-մուռտիկ, հեզիկ-մեզիկ, հայիլ-մայիլ, շլոփիկ-մլոփիկ, շորոր-մորոր, չալիկ-մալիկ, սևիկ-մևիկ, սխալ-մխալ, փոքր-մոքր*, 2. *բ-ով՝ զիզի-բիզի, ծոփիկ-բոփիկ (քիչ-քիչ), ճգի-բգի (խազվազած), սիլի-բիլի, պ-ով՝ զիզի-պիզի, ծոտի-պոտի, ծրիկ-պրիկ (կիսատ-պոատ)*, 3. *ա-ով՝ կոկիկ-սոկիկ, պարապ-սարապ*, 4. *վ-ով՝ թոփ-վոփ*, 5. *փ-ով՝ լոթի-փոթի, լոկե-փոկե, սուսիկ-փուսիկ, սուս-փուս, սուտ-փուտ, քսի-փսի*, 6. *ք-ով՝ ծուռ-քուռ:*

բ) Երկրորդ բաղադրիչի սկզբում ավելանում է որևէ բաղաձայն հնչյուն՝ *ավել-մավել, աման-չաման, առակ-չառակ, առակ-պառակ:*

գ) Երկրորդ բաղադրիչի ձայնավորը փոխվում է *ու-ի՝ ծակ-ծուկ, ձայն-ձուց, ձեն-ձուց (խոսկց.), մանր-մունր, մարդ-մուրդ, չեն-չուց, ձայնարկություններից՝ հայ-հույ, վայ-վույ, տաշ-տուշ, բնածայնականներից՝ թրախկ-թրուխկ, շախկ-շուխկ, շրախկ-շրուխկ* և այլն. երկվանկ բառերի դեպքում կարող է փոխվել կամ մեկ ձայնավորը՝ *շախկուր-շուխկուր, շախով-շուխով, տաշի-տուշի, փասա-փուսա*, կամ երկուսն էլ միասին՝ *աղքատ-ուղքուտ, լակոտ-լուկուտ, ջահել-ջուհուլ, փալաս-փուլուս:*

դ) Երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնը փոխվում է *ֆ-ի*, միաժամանակ փոխ-

վում է ծայնավորը (ա>ե)՝ *քաղցր-մեղր* (կարելի է ենթադրել, որ այս դեպքը երկու վերլուծական կազմության՝ *քաղցր-մաղր* և *քաղցր-մեղր* բառերի բաղադրությունն է):

ե) Երկրորդ բաղադրիչի ներսում կատարվում է բաղաձայնի հավելում կամ փոփոխություն: Սրանք հիմնականում բնաձայնություններ են և ժողովրդախոսակցական կազմություններ՝ *զընգ-զըրնգ*, *թըխկ-թըրխկ*, *ծընգ-ծըրնգ*, *փոր-փտոր*, *փլան-փստան*, *ֆլան-ֆատան* և այլն:

2. Երկրորդ բաղադրիչն անփոփոխ, առաջին բաղադրիչը հնչյունափոխված:

Այստեղ նույնպես հնարավոր են տարբեր տարատեսակներ.

ա) Առաջին բաղադրիչը կորցնում է իր առաջին բաղաձայնը՝ *ալան-թալան*, *ալար-դալար*, *ակաս-պակաս*, *այլուն-փայլուն*, *ավալ-թավալ*, *առոք փառոք*, *արան-տարան* և այլն: Արտաքուստ այս տեսակին նման են նաև *արմանք-զարմանք*, *ահել-ջահել*, *ոլոր-մոլոր* կազմությունները, բայց այստեղ ունենք ոչ թե բաղադրիչների զուտ հնչյունական տարբերացում, այլ առաջին դեպքում նույն արմատին *զ* նախդիր-նախածանցի հավելում, որի իմաստը մթազնած է (*արմանք-զարմանք*, հմմտ. գրբ. *արմանալ-զարմանալ-ընդարմանալ* տարբերակները), իսկ վերջին երկու դեպքում՝ տարբեր արմատների միացություն, որոնք ձևական տեսակետից հարանուններ են, իսկ իմաստային տեսակետից մեկի դեպքում առկա է հակամիջների միավորում՝ *ահել-ջահել*, իսկ մյուսի դեպքում՝ հոմանշային մերձավորություն՝ *ոլոր-մոլոր*: Որոշ նման կազմություններում անհնար է պարզել արմատի նախնական և հնչյունափոխված տարբերակները, քանի որ առանձին արմատները գործածական չեն և իմաստային որոշակիություն չունեն: Սա հատուկ է ժողովրդախոսակցական մի քանի բառերի՝ *աճուն-պաճուն*, *աճուն-մաճուն*, *ափալ-թափալ*, *ավոտ-չավոտ*, *հորոտ-մորոտ*, *դոհ-բոհ* և այլն:

բ) Առաջին բաղադրիչը երկրորդի մասնակի կրկնությունն է (առաջին վանկը կամ առաջին երկու հնչյունը)՝ որոշ չափով ենթարկված նաև հնչյունափոխությունների կամ հնչյունական հավելումներ ստացած. այդ հավելվող հնչյուններն են հիմնականում *ս*, *փ*, *պ*՝ *դափ-դատարկ*, *լեփ-լեցուն*, *խոփ-խոշոր*, *կաս-կարմիր*, *կաս-կապույտ*, *կափ-կանաչ*, *կափ-կապույտ*, *կրս-կլոր* (արևմտհ.), *ճեփ-ճերմակ*, *ճիփ-ճիշտ*, *մաս-մաքուր*, *միս-միմակ* (արևմտհ.), *պաս-պարապ* (արևմտհ.), *սիս-սպիտակ* և այլն: Միավանկ բառերի մեջ առաջին բաղադրիչի վերջին բաղաձայնն է փոխվում *փ-ի*՝ *թափ-թաց*, *լիփ-լիք*, *նոփ-նոր*, *չոփ-չոր*, *սեփ-սև*: Այս տիպի կառույցներում սաստկականության իմաստը ավելի է ընդգծվում, քան սովորական կրկնությունների դեպքում (հմմտ. *ճերմակ-ճերմակ* և *ճեփ-ճերմակ*, *չոր-չոր* և *չոփ-չոր*):

Բ. Բաղադրիչների քերականական ձևավորում

1. Բաղադրիչներից մեկը թեք հոլովաձևով

ա) Առաջին բաղադրիչն ուղղակաճան, երկրորդը տրական հոլովաձևով՝ *զլուխ գլուխի*, *գիրկ գրկի*, *թև թևի*, *խելք խելքի* (տալ), *ծոց ծոցի*, *կողք կողքի*, *կտուց կտցի*, *ձեն ձենի* (տալ), *ձեռք ձեռքի*, *ճակատ ճակատի*, *մեջք մեջքի*, *ուս ուսի*, *քիթ քթի*, *օր օրի* և այլն: Բերված կառույցներում շարահյուսական հարաբերությունը բաղադրիչների միջև մթազնած է, երբ ամբողջ կառույցը վերցվում է որպես ձևի պարագա. օրինակ՝ *Նստած էին զլուխ զլխի*: Սակայն բայական բառակապակցության մեջ կիրառվելիս բաղադրիչներն ինքնուրույն ընկալելու դեպքում ի հայտ է գալիս երկրորդ բաղադրիչի՝ հանգման խնդրի երբեմնի իմաստն ու պաշտոնը (օրինակ՝ *Կտրիճները ուս ուսի տվեցին և անշարժացան*), քանի որ վերջին հաշվով այս կառույցները ծագել են նման տիպի շարահյուսական կապակցություններից:

բ) Նույնատիպ բաղադրիչները՝ կիրառված որոշյալ առումով՝ *ծեզը ծեզին*, *մութը մթին*, *մատը մատին* (*չխփել*), *օրը օրին* և այլն: Բերված օրինակներից առաջին երկուսում բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություն չկա կամ լիովին մթազնած է: Պարագայական իմաստն արտահայտում է միայն երկրորդ բաղադրիչը՝ *ծեզին*, *մթին*, իսկ ուղղակաճան բաղադրիչը միայն սաստկական հավելադրություն է:

Հաճախ ա) և բ) կետերում նշված բաղադրությունները իրենց հերթին հանդես են գալիս որպես բայական հարադրությունների անվանական բաղադրիչներ՝ հիմնականում *տալ* բայի հետ՝ *խելք խելքի տալ*, *ձեռք ձեռքի տալ*, *ձեն ձենի տալ* և այլն: Այլ բայերի հետ գործածվելիս սովորական խնդրային կամ պարագայական կիրառություններից սրանք

տարբերվում են իրենց դարձվածային արժեքով. հմմտ.՝ *նորը նորին գցել* (ուղղակի իմաստով) և *մատը մատին չխփել* (փոխաբերական-դարձվածային իմաստով):

գ) Բաղադրիչներից մեկը գրաբարյան հոգնակի սեռական հոլովաձևովով, մյուսը անփոփոխ: Այս կառույցները խիստ սակավաթիվ են, պահպանվել են որպես քարացած կազմություններ, և բաղադրիչների քերականական ձևավորումը ժամանակակից հայերենի տեսակետից այլևս ընկալելի չէ: Սեռական հոլովաձևով բաղադրիչը կարող է հանդես գալ մի դեպքում նախադաս՝ *արքայից արքա, իշխանաց իշխան, տիկնանց տիկին*, իսկ մյուս դեպքում վերջադաս՝ *գիրք գրոց, երգ երգոց, սրբություն սրբոց*:

Ունենք և նման կառուցվածքի մակբայական հարադրություն՝ *հավիտյանս հավիտենցից*:

Որոշ չափով մթազնած է նաև բաղադրիչների միջև հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական հարաբերությունը, այդ է պատճառը, ի դեպ, որ հաճախ կիրառվում է «սրբության սրբոց» սխալ ձևը:

դ) Առաջին բաղադրիչը բացառական հոլովաձևով, երկրորդը անփոփոխ: Այստեղ ամբողջ կառույցը հանդես է գալիս որպես ժամանակի կամ տեղի մակբայ և համապատասխանաբար նախադասության մեջ դառնում ժամանակի կամ տեղի պարագա: Այսպես, հետևյալ օրինակներում կրկնավորները ժամանակի մակբայներ են (նախադասության մեջ՝ ժամանակի կամ ձևի պարագա)՝ *դարից դար, դեպքից դեպք, ժամից ժամ, տարուց տարի, թուպից թուպե*, կամ՝ տեղի մակբայներ (նախադասության մեջ՝ տեղի պարագա)՝ *աշխարհից աշխարհ, ափից ափ, բերնից բերան, երկրից երկիր, ժայռից ժայռ, ծայրից ծայր, ծառից ծառ, ծովից ծով, հեռվից հեռու, ձեռքից ձեռք, ճյուղից ճյուղ, որտեղից որտեղ, սարից սար, տեղից տեղ, տնից տուն, քաղաքից քաղաք, քարից քար* և այլն: Ընդ որում, նկատելի է, որ հարադրության երկու բաղադրիչներն էլ առանձին-առանձին դարձյալ հիմնականում արտահայտում են տեղի պարագայի իմաստ, առաջինը՝ ելման, երկրորդը՝ ուղևորման իմաստությունով: Հարկ է նշել, որ կրկնավորների այս կառույցին իմաստով և գործառնությամբ սերտորեն հարում են կցական կազմությունները, որոնք նույնպես կազմված են կրկնված հիմքերից՝ *գյուղեգյուղ, դռնեդռու, երկրեերկիր, թփեթուփ, ծաղկեծաղկ, սարեսար, տեղետեղ, տնետուն, քաղաքեքաղաք, քարեքար* և այլն: Այստեղ կապող ձևույթի դեր է կատարում բացառականի երբեմնի (գրաբարյան) է վերջավորությունը, որին այս կառույցներում սակայն ավելի ճիշտ կլինեն բարբառային ծագում վերագրել, քանի որ ամբողջական կառույցներն ինքնին ժողովրդախոսակցական երանգ ունեն, և, բացի այդ, որոշ հիմքերի դեպքում գրաբարյան բառը բացառական հոլովում այլ ձևավորում էր ստանում՝ *ի գեղջե, ի տեղոյ կամ ի տեղուջե*:

Թերևս բաղադրիչների հոլովական իմաստի և նրանց միջև շարահյուսական հարաբերությունը մասամբ պահպանված լինելու պատճառով է՝ Աղայանը աշխարհաբարի բացառական հոլովաձևով կառույցները չի դիտում որպես կրկնավորներ (այսինքն՝ բանականության արդյունք), այլ սովորական շարահյուսական կապակցություններ՝ հակադրելով վերը նշված *տնետուն* տիպի կրկնավոր բարդություններին՝: Սակայն մենք զրտնում ենք, որ այստեղ ևս բաղադրիչների սերտաճման աստիճանը և որոշ դեպքերում նոր՝ հաճախ դարձվածային իմաստի առաջացումը, որը չի համընկնում բաղադրիչների իմաստների գումարին, մեզ իրավունք են տալիս վերը նշված կառույցները նույնպես համարել բառակազմական երևույթ՝ կրկնավոր բաղադրությունների մի տեսակ: Հմմտ. *Նա դեպքից դեպք է գալիս* (հազվադեպ), *Թուպից թուպե սպասում ենք նրան* (շատ շուտով), *Այստեղ դարից դար ոչինչ չի փոխվում* (շատ երկար ժամանակ), *Նրա խոսքը ծայրից ծայր անմտություն էր* (ամբողջապես) և այլն: Բացի այդ, շարահյուսական կառույցները ավելի ազատ կապակցություններ են, կարող են բաղադրիչների միջև այլ անդամներ ընդունել, բաղադրիչները կարող են ունենալ իրենց առանձին լրացումները և հող ստանալ, որը հնարավոր չէ, երբ նրանք միասնաբար մեկ բառի կազմում են հանդես գալիս: Անշուշտ, ազատ կապակցությունը նույնպես կարող է նախադասության մեկ անդամի դեր կատարել, բայց արդեն որպես շարույթ և ոչ թե բառային միավոր: Այդպես է հետևյալ օրինակներում՝ *Գյուղի մի ծայրից մյուս ծայրը նոր փողոց անցկացրին* (մի ծայրից մյուս

* Տե՛ս էլ. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 231:

ծայրը - տեղի պարագա): *Պետությունը գոյատևեց մ.թ.ա. 5-րդ դարից մինչև 3-րդ դարը (մ.թ.ա. 5-րդ դարից մինչև 3-րդ դարը - ժամանակի պարագա):*

2. Բայական հարացույցի անդամներով

ա) Երկրորդ բաղադրիչը չ- ժխտական մասնիկով: Այս կազմություններում հանդես է գալիս հարակատար դերբայը, որը արդեն լիովին ածականական կամ գոյականական արժեք է ստացել՝ *ասած-չասած, եղած-չեղած, ունեցած-չունեցած, իմացած-չիմացած, տեսած-չտեսած*: Նախադասության մեջ այս հարադրությունները ստանում են գոյականացին կամ ածականին հատուկ պաշտոններ, կարող են հոլովվել և հոդ ստանալ՝ *Ունեցած-չունեցածը հավաքեց, գնաց (ունեցած-չունեցածը՝ ուղիղ խնդիր), իմացած-չիմացածը բաների մասին մի՛ խոսիր (իմացած-չիմացած՝ որոշիչ)*: Բայց եթե նման կառույցները հանդես են գալիս մակբային հատուկ կիրառություններով, այսինքն՝ դառնում են ժամանակի կամ ձևի պարագա, այդ դեպքում գործ ունենք բայական հարադրությունների հետ՝ *Եկած-չեկած՝ իսկույն մտեցան ճաշատեղանին*: Այս կիրառությամբ կարող են հանդես գալ ոչ միայն հարակատար դերբայները, այլև դիմավոր բայի հարացույցային մյուս ձևերը՝ *Եկավ-չեկավ՝ նորից գործի անցավ, Ասում է-չի ասում՝ մարդիկ իսկույն քար են դառնում*: Նման կառույցները է. Աղայանը իրավամբ համարում է բայական⁷:

բ) Հրամայական եղանակի ձևերով կարելի է նշել արևմտահայ կամ բարբառային երանգով *բռնե-բռնե, կպուր-կպուր* օրինակները: Բայական իմաստը այստեղ մթազանա է, և հարադրությունները հանդես են գալիս գոյականական իմաստով ու կիրառությամբ՝ *Բռնե-բռնեի տարիներին շատ մարդ կորավ: Կպուր-կպուրը ծայր առավ*:

գ) Սահմանական ներկայի I դեմքի և ըղձական ապառնի III դեմքի բայաձևերով կազմված է բարբառային ծագում ունեցող *սիրես-սիրես // սիրի-սիրի* բուսանունը («երեքնուկ»):

դ) Ենթակայական դերբայներով կամ սակավաթիվ կազմություններ՝ երկրորդ բաղադրիչի տրական հոլովաձևով՝ *տանող-տանողի, փախչող-փախչողի*:

Նախդրական կրկնավորներ

Ժամանակակից հայերենում այս տեսակի կրկնավորներն ընդգծված գրական-գրքային երանգ ունեն, և դա բնական է թվում, քանի որ նախդիրների զանազան կիրառությունները (նաև այլ տիպի կապակցություններում) արդի գրական լեզվում հիմնականում գրաբարյան ազդեցության կամ գրաբարից ժառանգվելու արդյունք է: Գրաբարում նախդրական հարադրությունները, այդ թվում՝ կրկնավորները ավելի բազմազան էին թե՛ տարբեր նախդիրների, թե՛ տարբեր հոլովաձևերի կիրառության տեսակետից: Ժամանակակից արևելահայերենում սրանք հանդես են գալիս հիմնականում *առ* նախդրով: Ավելի սակավաթիվ են *ընդ* նախդրով դեպքերը, քանի որ դրանք մեծ մասամբ սերտանաձած կազմություններ են և արդեն վերածվել են կցական բարդությունների: Նրանց ինքնուրույն արտասանությունն ու առանձին գրությունը հետզհետե սահմանափակվում է: Անշուշտ, որոշ չափով դա հատուկ է և *առ* նախդիրն (հմմտ.՝ *դեմ առ դեմ - դեմառդեմ, մերթ ընդ մերթ - մերթընդմերթ*): Ստորև ներկայացնում ենք օրինակներ ժամանակակից հայերենի շաղկապական կրկնավորներից անջատ գրությամբ՝ առանց նշելու, որ դրանց մի մասը զուգահեռաբար ունի և կից գրություն՝

ա) *առ* նախդրով՝ *բանակ առ բանակ, բառ առ բառ, գիսակ առ գիսակ, դեմ առ դեմ երես առ երես, էջ առ էջ, թավալ առ թավալ, ժամանակ առ ժամանակ, ժամ առ ժամ, լեզեզեռ առ լեզեզեռ, խավ առ խավ, կաթիլ առ կաթիլ, կանգուն առ կանգուն, կես առ կես, կենտ առ կենտ, կոհակ առ կոհակ, կտոր առ կտոր, հարյուր առ հարյուր, ճակատ առ ճակատ, ճյուղ առ ճյուղ, մաս առ մաս, մեկ առ մեկ, մեջ առ մեջ, շերտ առ շերտ, սակավ առ սակավ, վանկ առ վանկ, տառ առ տառ, տող առ տող, թուպ առ թուպ, փաղանգ առ փաղանգ, փոխ առ փոխ, փոքր առ փոքր, քայլ առ քայլ, քիչ առ քիչ և այլն*:

բ) *ընդ* նախդրով՝ *թափ ընդ թափ, հետ ընդ հետ, մերթ ընդ մերթ, մեջ ընդ մեջ*:

գ) *ի* նախդրով՝ *ծալ ի ծալ, կաղ ի կաղ, շար ի շար, չոք ի չոք, փոխ ի փոխ*:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 232:

Ծաղկապական կրկնավորներ

Ի տարբերություն նախորդականների՝ շաղկապական կրկնավորները ավելի շատ ժողովրդախոսակցական երանգ ունեն։ Այդ մասին է վկայում և այս կառույցներում առավելապես *ու* շաղկապի կիրառությունը. և շաղկապը հանդիպում է շատ քիչ դեպքերում։

Այս տեսակի կրկնավորները Ա. Մարգարյանը քննում է բաղադրականների շարքում⁹, սակայն, մեր կարծիքով, կրկնավորները լիակատար ներկայացնելու տեսակետից սովյալ դեպքում ավելի կարևոր ճատկանիշ պետք է համարել բառակազմական եղանակը՝ բաղադրիչների կրկնությունը և ոչ թե կապակցման միջոցը և բաղադրիչների ձևավորման առանձնահատկությունները, ուստի բաղադրականների այս տեսակը ավելի նպատակահարմար է ներկայացնել այստեղ որպես շաղկապական կրկնավորներ։ Այս տեսակի մեջ ևս ըստ բաղադրիչների ձևավորման կարելի է առանձնացնել ենթատեսակներ.

I. «Մաքուր» (անփոփոխ) բաղադրիչներով

Սրանց մեջ առանձնացվում են ենթատեսակներ միայն ըստ բաղադրիչների խոսքի-մասային պատկանելության, ինչպես հարակցական տեսակի մեջ, բայց պետք է ասել, որ սովյալ դեպքում չկա նախորդի բազմազանությունը։ Կարելի է բերել հետևյալ օրինակները՝

գոյականներով՝ *կաթիլ ու կաթիլ,*

ածականներով՝ *անծիր ու անծիր, լի ու լի, նոր ու նոր,*

թվականներով՝ *հազար ու հազար, բյուր և բյուր,*

դերանուններով՝ *այլ և այլ, ես ու ես, ինչ ու ինչ, ով ու ով, քանի ու քանի,*

մակբայներով՝ *դեմ ու դեմ, շատ ու շատ, ետ ու ետ, վեր ու վեր,*

ձայնարկություններով՝ *ջան ու ջան, վախ ու վախ։*

II. «Ձևավոր» (փոփոխված) բաղադրիչներով

Ա. Բաղադրիչների հնչյունական ձևավորում

1. Առաջին բաղադրիչն անփոփոխ, երկրորդը՝ հնչյունափոխված։

Ծաղկապական կրկնավորների դեպքում հնչյունական փոփոխակումը այնքան բազմազան չէ, որքան հարակցականների դեպքում, և օրինակներն էլ սակավաթիվ են։ Թերևս պատճառներից մեկն այն է, որ բաղադրական կրկնավորները լեզվի զարգացման ընթացքում հիմնականում վերածվել են համադրական տիպի կցական կազմությունների։ Կարելի է ներկայացնել հետևյալ դեպքերը.

ա) Երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնը փոխարինվում է *մ*-ով՝ *ծուռ ու մուռ, ծուխ ու մուխ, ծուռ ու մուռ, կեն ու մեն, հաց ու մաց, ճանճ ու մանճ, շուռ ու մուռ, չիր ու միր, սուտ ու մուտ, տեղ ու մեղ, ցախ ու մախ, քիթ ու միթ, քիչ ու միչ, կամ փ-ով՝ սուս ու փուս։* Սրանց հակառակ՝ *ոլոր ու մոլոր, օրոր ու շորոր* կազմությունները չնայած վերինների հետ իրենց հնչյունական ձևավորման մասնության (սկզբնաբաղաձայնների տարբերացում), իրականում ոչ թե նույն, այլ հոմանիշ կամ իմաստային մերձավորություն ունեցող արմատների հարադրությամբ են կազմվել։

բ) Երկրորդ բաղադրիչի ձայնավորից առաջ ավելանում է *զ* նախորդ, որը, սակայն, որպես այդպիսին չի ընկալվում և տալիս է միայն հնչյունական տարբերակում՝ *ամսյ ու զամսյ, արդ ու զարդ։*

գ) Երկրորդ բաղադրիչի ձայնավորը փոխվում է *ու-ի՝ ծակ ու ծուկ, մարդ ու մուրդ։*

դ) Երկրորդ բաղադրիչը առաջին արմատի ածանցավոր տարբերակն է՝ *ապատ և անապատ, բորբ ու բորբոք, գիլ ու գլոր, անդ ու անդաստան // հանդ ու հանդաստան, մեղմ ու մեղմիկ։* Հնչյունական մեծ զանազանության և բաղադրիչների բառակազմական կառուցվածքի տարբերության պատճառով այս տեսակի կազմությունները կրկնավորների մեջ ենք ներառում որոշ վերապահությամբ։

2. Երկրորդ բաղադրիչն անփոփոխ, առաջին բաղադրիչը հնչյունափոխված։

Այս ենթատեսակի օրինակները նույնպես խիստ սակավաթիվ են՝ *ախտ ու բախտ, առք ու փառք, արք ու սարք, ուն ու բուն։*

⁹ Ա. Մ. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 76։

Բ. Բաղադրիչների քերականական ձևավորում

ա) Դերանվանական բաղադրիչների տրական հոլովածն՝ *իճձ ու իճձ, իրեն ու իրեն, ձեզ ու ձեզ, մեզ ու մեզ, քեզ ու քեզ*:

բ) Օժանդակ բայի ժխտական ձևը, որը անվանական արժեք է ստացել՝ *չեմ ու չեմ*:

գ) Այս նույն կարևորվածքը՝ միաժամանակ երկրորդ բաղադրիչի ձայնավորի հնչյունական փոփոխությամբ (ե>ու)՝ *չեմ ու չում*:

Ծաղկապատկան բաղադրությունների մեջ կարելի է ներկայացնել և *հա* սաստկական մասնիկով կազմված կրկնավորները, քանի որ նշված մասնիկը այս բաղադրություններում իմաստով մոտենում է հավելական շաղկապներին: Այս մասնիկով կապակցվում են հիմնականում բնածայնական բառերը՝ *թրրիսկ հա թրրիսկ, խըռ հա խըռ, շըիսկ հա շըիսկ, փըստ հա փըստ, քըստ հա քըստ*, և հրամայական եղանակի եզակի թվի բայածները՝ *արի հա արի՛, բե՛ր հա բե՛ր, գնա՛ հա գնա՛, կե՛ր հա կե՛ր, տո՛ւր հա տո՛ւր, քաշի՛ր հա քաշի՛ր* և այլն: Վերջին տեսակի կազմությունները կարելի է համարել քերականորեն ձևավորված (բայական հարացույցի անդամով կազմված): Այս բաղադրությունների խոսքիմասային արժեքը դժվար է որոշել, քանի որ սրանք նախադասության մեջ յուրահատուկ գործածություն են ունենում որպես ուրիշի խոսքի համառոտ մեջբերում՝ *Արդեն ձանձրացրեց՝ բե՛ր հա բե՛ր, Ստիպում է՝ գնա՛ հա գնա՛*: Բայց կարելի է նաև մեկնաբանել որպես իրադրության նկարագրություն՝ ձևի կամ պատճառի պարագայի երանգավորումով՝ (ինչպե՞ս ձանձրացրեց՝ բազում անգամ «բեր» ասելով):

Այսպիսով, ժամանակակից հայերենի վերլուծական բառակազմության մեջ կրկնավորները ներկայացված են կառուցվածքային բազմազան կաղապարներով և իմաստային ու գործառական ուշագրավ առանձնահատկություններով:

Գ. Գ. ВАРТАНЯН - Итеративные аналитические конструкции в современном армянском языке. - В статье рассматриваются структурные и функциональные особенности аналитических конструкций, образованных путем повтора компонентов, имеющих относительную самостоятельность. Особое внимание уделено фонетическому и морфологическому оформлению основ-компонентов и категориальной (частеречной) принадлежности как компонентов, так и лексических единиц, полученных в результате словообразовательного процесса.